# ՀԵՐԵՋԵԱՄ ԷՋԵՐ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
## ԱՆԴՐԱՆԻԿ ՆՄՈՅՇՆԵՐԷՆ
### Վենետիկ (1512 — 3)





Առ. քե՛զ, ՄԵԴԱՊԱՐՏ ՅԱԿՈԲ, կը վերընծայեմ իմ հիացումս ու պաշտումս՝ անփոխարինելի ծառայութեանդ համար զոր չորս դար առաջ ըրիր մեզի մատուցիր Հայկեան սերունդին, ի տար աշխարհ կամովին պանդխտելով, հոն անանուն և անծանօթ ապրելով և Հայ տպագրութեան նախախայրիքը տալով մեզ, իբր մատունք նուիրական մեր մտաւորական տաճարին: Հայ ազգը **մեծագործ**-ութեանդ հանդէպ **երախտապարտ** պիտի մնայ յաւէտ, և ոսկոյ մակաղմնի մը պէս՝ անունդ յծուած այդ ածականն ալ պարտի այսու **բազմերախտի** վերածել անմայման :



*

* * Հ. Գարեգին Ծ. Վ. Մենեվիշեան հաճեցաւ ներկայ էջերն իրենց Վիեննայի մատենադարանէն լուսանկարելով մեզ փութացնել, առնց ընկերացունելով նամակ մըն ալ որմէ կ'արտագրեմ հետագայ ուշագրաւ տողերը. «Առաջինը (ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ) բնաւ ոչ այնչափ «մաքուր, բայց իր **դեղին երեսներովը**՝ բովանդակ «Հայութեան **սրբազանները** կը հանէ՝ գիտութեան և «մարդկութեան առջև, քանի որ 62 տարի եաքը միայն «Գուտեմբերգի առաջին տպարանին (հաստատեալ 1450 «ին) փառացը մասնակից կ'ընէ Հայութեան՝ իբր խօսուն «վկայ մեծածայն հնչեցնելով, թէ գնացած են Հայք օգ-«տակարն ու պիտանին՝ նոյն իսկ հեռաւոր տագնապալից ուղեգնացութեամբ ձեռք անցընել» :